


ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վերլուծությունը այլընտրանքային մոտեցումներով

Մարգարյան Չավեն Գ.

*«Ինելիքրանկ» ՓԲԸ, Համապատասխանության ապահովման բաժին, ալիազ մասնագետ,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, հայցորդ (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0001-7022-0100>

zav.margaryan.98@mail.ru

Հակոբյան Արմեն Ա.

*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ֆինանսական հաշվառման ամբիոն,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)*

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Գլխավոր հաշվապահ

[ResearcherIDIXD-7739-2023](https://orcid.org/0000-0001-9884-5404)

 <https://orcid.org/0000-0001-9884-5404>

armen_hakobyan@hotmail.com

ՀՏԳ՝ 336.7; EDN: YVOLHS; JEL: G21;

DOI: 10.58587/18292437-2024.5-194

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ առևտրային բանկ, ակտիվների շահութաբերություն, զուտ շահույթ, ֆինանսական արդյունք, սեփական կապիտալի շահութաբերություն, արդյունավետություն, այլընտրանքային մոտեցում, բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարում, բանկային տեխնոլոգիաներ, ներքին կորպորատիվ պատասխանատվություն

Анализ финансовых результатов коммерческих банков РА альтернативными подходами

Маргарян Завен Г.

Соискатель, Государственный экономический университет Армении (Ереван, РА)

ЗАО «Инекобанк», Отдел комплаенс, старший специалист

Акопян Армен А.

доктор экономических наук, профессор, кафедра Финансовый учет,

Государственный экономический университет Армении (Ереван, РА)

Главный бухгалтер ОАО «АКБА БАНК»

Аннотация: Каждый коммерческий банк действует с целью обеспечения максимальной прибыли. Обеспечение финансового результата коммерческих банков в виде чистой прибыли является фундаментальной проблемой, решение которой возможно при последовательном использовании банками не только численного, но и нечислового анализа. Исходя из этого, можно различать традиционные и альтернативные подходы к анализу финансовых результатов. Количественный анализ финансовых результатов – это исследовательский подход, позволяющий определить, какие изменения были внесены в статьи, отраженные в консолидированном отчете о прибылях и убытках и других совокупных финансовых результатах, как в абсолютном, так и в относительном выражении. В результате использования традиционного подхода финансовые аналитики получают возможность выявить влияние численно выраженных факторов, вызывающих изменения указанных статей каждый год по сравнению с предыдущим годом. Альтернативный анализ – это совокупность нестандартных подходов к оценке финансовых результатов. В отличие от традиционного подхода, анализирующего статьи, обеспечивающие чистую прибыль или убыток, рентабельность, альтернативный подход основан на анализе более глубокого, качественного контекста банковской деятельности. В данной статье экологическое, социальное и корпоративное управление, использование банковских технологий и внедрение стратегии внутренней корпоративной ответственности выбраны в качестве альтернативных факторов, влияющих на эффективность банковской деятельности, с целью оценки влияния на максимизацию чистой прибыли. Для наиболее эффективного анализа была проведена сравнительная оценка с аналогами с учетом влияния вышеперечисленных факторов на материалах трех ведущих банков Республики Армения.

Ключевые слова и словосочетания: коммерческий банк, финансовые результаты, чистая прибыль, рентабельность активов, рентабельность собственного капитала, эффективность, альтернативный подход, экологическое, социальное и корпоративное управление, банковские технологии, внутрикорпоративная ответственность

Analysis of financial results of commercial banks of the Republic of Armenia by alternative approaches.

Margaryan Zaven G.

PhD student at Armenian State University of Economics (Yerevan, RA)

"Inecobank" CJSC, Compliance Division, senior specialist

Hakobyan Armen A.

Armenian State University of Economics, Department of Financial Accounting, Doctor of Economics,

Professor, (Yerevan, RA)

Chief Accountant of OJSC "ACBA BANK"

Abstract. Every commercial bank operates with the aim of ensuring maximum profit. Ensuring the financial result of commercial banks in the form of net profit is a fundamental problem, the solution of which is possible with the consistent use of not only numerical but also non-numerical analysis by banks. Based on this, it is possible to distinguish between traditional and alternative approaches to the analysis of financial results. Quantitative analysis of financial results is an exploratory approach that allows us to determine what changes have been made to the items reflected in the consolidated income statement and other comprehensive financial results, both in absolute and relative terms. As a result of using the traditional approach, financial analysts are able to identify the impact of numerically expressed factors that cause changes in the specified items each year compared to the previous year. Alternative analysis is a set of non-standard approaches to assessing financial results. Unlike the traditional approach, which analyzes items that provide net profit or loss, profitability, the alternative approach is based on the analysis of a deeper, qualitative context of banking activities. In this article, environmental, social and corporate governance, the use of banking technologies and the implementation of an internal corporate responsibility strategy are selected as alternative factors affecting the efficiency of banking activities in order to assess the impact on the maximization of net profit. For the most effective analysis, a comparative assessment was carried out with analogues taking into account the impact of the above factors on the materials of three leading banks of the Republic of Armenia.

Keywords & phrases: commercial bank, financial results, net profit, return on assets, return on equity, efficiency, alternative approach, environmental, social and corporate governance, banking technologies, internal corporate responsibility

Ներածություն

Բանկային գործունեության ֆինանսական արդյունքները վերլուծվում են թե՛ ավանդական, թե՛ այլընտրանքային մոտեցումներով: Այլընտրանքային վերլուծության գործիքակազմերը բազմաթիվ են, սակայն, հաշվի առնելով ՀՀ առևտրային բանկերի՝ դրանց ուղղությամբ զարգացման միտումները, ընտրվել են երեքը՝ բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարումը, բանկային տեխնոլոգիաների օգտագործումը, ներքին կորպորատիվ պատասխանատվության ռազմավարության ներդրումը: Այս գործոնները ոչ միայն ազդում են զուտ շահույթն առավելագույնի հասցնելու նպատակի իրագործման վրա, այլև դրական ֆինանսական արդյունքի ապահովման դեպքում թույլ են տալիս առևտրային բանկերին ներագդել շրջակա միջավայրի, սոցիալական պատասխանատվության, կորպորատիվ կառավարման որակի վրա: Բանկային տեխնոլոգիաների և ներքին սոցիալական պատասխանատվության ներազդեցությունը դրական ֆինանսական արդյունքի ապահովման առումով կրում է փոխադարձ բնույթ: Բանկային տեխնոլոգիաներն արտացոլում են առևտրային բանկերի նորարարական բնույթը, և եթե առևտրային բանկին հաջողվում է ոչ միայն հագեցած լինել նորարարական տեխնոլոգիաներով, այլև վստահություն առաջացնել պոտենցիալ հաճախորդների մոտ այդ տեխնոլոգիաների անվտանգու-

թյան առումով, ապա ավելանում են նորագույն տեխնոլոգիաների օգտագործման արդյունք հանդիսացող եկամտային հոսքերը, ինչը թույլ է տալիս կրկին ներդրումներ կատարել և առավել արդիականացնել բանկի կողմից մատուցվող ծառայությունները: Կորպորատիվ պատասխանատվությունը բանկերի զարգացման ռազմավարության կարևոր տարր է և բանկերը, որոնք ակտիվորեն աշխատում են ներքին սոցիալական պատասխանատվության զարգացման ուղղությամբ, կարող են ոչ միայն բարելավել իրենց ֆինանսական ցուցանիշները, այլև ամրապնդել դիրքերը բանկային համակարգում՝ ստեղծելով երկարաժամկետ մրցակցային առավելություններ: Այսպիսով, այլընտրանքային մոտեցումներով ֆինանսական արդյունքի վերլուծությունը թույլ է տալիս պատկերացում կազմել կոնկրետ բանկի մրցակցային առավելությունների մասին և մշակել առաջարկություններ դրանք շեշտադրելու դեպքում բանկային համակարգում էլ ավելի կայուն դիրք գրադեցնելու վերաբերյալ:

Առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վերլուծության այլընտրանքային մոտեցումների տեսական դրույթները

Տնտեսագիտական տեսանկյունից ֆինանսական արդյունքը միայն պատրաստի արտադրանքի (ապրանքներ, աշխատանքներ/ծառայություններ) իրացման գործընթացում ստացված շահույթի (վնասի) մեծությունը չէ: Այն նաև հաշվետու ժամանակաշրջանում տնտեսվարող

սուբյեկտի սեփական կապիտալի մեծության բացարձակ աճի (նվազման) չափի վրա ազդող հիմնական մեծություններից է: Այն կազմակերպության ապահովությունն է՝ դիմակայելու արդի տնտեսական պայմաններին [3, էջ 229]: Ֆինանսական արդյունքների վերլուծական դիտարկումների հիմքում առաջին հերթին դրանց ճշգրիտ հաշվառումն է, որի սխալ կամ թերություններով վարման դեպքում կազմակերպությունը կասկածի տակ է դնում հավանական դրական ելքը: Ա. Հ. Սարգսյանը, Ա. Մ. Մարջանյանը, Ն. Ս. Օգանեզովան գտնում են, որ գուտ շահույթը կամ վնասը շարունակվող և ընդհատված գործունեության եկամուտների և ծախսերի համադրման արդյունքում ստացված մեծությունն է, որն անվանվում է ֆինանսական արդյունք՝ հաշվի չառնելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների բաղադրիչները, իսկ արդեն դրանց հաշվի առնմամբ ստացված մեծությունը կոչվում է համապարփակ ֆինանսական արդյունք [3, էջ 229]: Թ. Հ. Մովսիսյանը շահույթը կամ վնասը մեկնաբանում է որպես մեկ գործառնական փուլում ճանաչված եկամուտների և ծախսերի, օգուտների և կորուստների համադրման դրական կամ բացասական արդյունք [1, էջ 290]: Հեղինակների տեսակետներն ընդունելի են և սահմանվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջների հաշվի առնմամբ:

Տնտեսվարող սուբյեկտի ֆինանսական արդյունքը, որպես ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության վերջնական բնութագիր և ցուցիչ, տեղեկատվական կարևոր հենք է կազմակերպության հետ գործարար տարաբնույթ կապերի մեջ գտնվող սուբյեկտների համար: Չուտ շահույթի առկայությունը և շարունակական աճը վստահություն է ստեղծում մատակարար կազմակերպությունների համար, ապահովում է աշխատակիցների հանգստությունն առ երկարաժամկետ հատվածում աշխատանքով ապահովված լինելը, ֆինանսավարկային կազմակերպություններում ձևավորում է տվյալ կազմակերպության դրական իմիջքը [5]:

Ֆինանսական արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս գնահատել արտադրական ծրագրի իրականացումը, հաշվարկել ձեռնարկության կատարողականի ցուցանիշները, դրա շահութաբերությունը, բացահայտել արտադրանքի (ապրանքների, աշխատանքների և ծառայությունների) առավել շահավետ տեսակները: Շահույթի կամ վնասի վերլուծության արդյունքում հնարավոր է բացահայտել նաև կազմակերպության ուժեղ և թույլ կողմերը, կանխատեսել կատարողականի ապագա արդյունքները, կանխատեսել ռազմավարական որոշումների հետևանքները, գնահատել արտադրության ընդլայնման ազդեցությունը կազմակերպության ապագա ֆինանսական վիճակի վրա և շատ ավելին [6]:

Ֆինանսական արդյունքների վերլուծության նպատակն է կազմակերպության ղեկավարությանը և նրա ֆինանսական, տնտեսական ծառայու-

թյուններին ժամանակին տրամադրել այնպիսի տվյալներ, որոնք նրանց թույլ կտան օբյեկտիվ դատողություն կատարել գործունեության տարբեր ոլորտներում կազմակերպության արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև բացահայտել վաճառքից ստացված շահույթի ավելացման պահուստները [10]:

Ֆինանսական արդյունքների վերլուծության խնդիրները բազմաթիվ են: Ա. Չ. Սարգսյանը, Կ. Ա. Առաքելյանն որպես ֆինանսական արդյունքների վերլուծության խնդիրներ սահմանում են հետևյալները.

- « - ուսումնասիրել շահույթի կազմն ու կառուցվածքը և գնահատել աճի տեմպերը,
- իրականացնել արտադրանքի իրացումից ստացված շահույթի գործոնային վերլուծություն,
- գնահատել «ծախսեր - ծավալ - շահույթ» հարաբերակցությունը,
- վերլուծել գործառնական այլ և ոչ գործառնական գործունեության ֆինանսական արդյունքները,
- հետազոտել կուտակված շահույթի բաշխման և օգտագործման կարգը» [2, էջ 254]:

Ն. Ս. Վլասովան, Վ. Ս. Կորնիլյաշը որպես ֆինանսական արդյունքների վերլուծության հիմնական խնդիրներ սահմանում են հետևյալները.

- ֆինանսական արդյունքների վրա օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության որոշում.
- շահույթի և շահութաբերության ավելացման պահուստների հայտնաբերում.
- կազմակերպության՝ շահույթի և շահութաբերության բարձրացմանն ուղղված գործողությունների գնահատում.
- հայտնաբերված պահուստների արդյունավետ օգտագործման միջոցառումների մշակում [6]:

Վերը բերված բոլոր խնդիրներն էլ ընդունելի են և դրանք պետք է կենսագործել շարունակական հատվածում՝ ապագայում կազմակերպության կայուն դիրքերի ապահովման նպատակով:

Ամենևին միտք չունենալով նսեմացնել հեղինակների ուսումնասիրությունները՝ պետք է նշել, որ այլընտրանքային գնահատումների տեսանկյունից դրանք թերի են, քանի որ չեն սահմանում, որ ֆինանսական արդյունքների վերլուծությունը նպատակ ունի պարզել, թե որպիսի ոչ ավանդական գործոններ են ազդում ֆինանսական արդյունքների ձևավորման վրա:

Անդրադառնալով առևտրային բանկերի գործունեության արդյունքների վրա բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման ծրագրերի (ESG կամ ԲՄԿ ծրագրեր) ազդեցությանը՝ պետք է նշել, որ օտարերկրյա աղբյուրներում այս համատեքստը բավականաչափ ուսումնասիրված է: Ա. Ս. Դուցինին, Ն. Լ. Նիկոլինան, Ի. Ս. Բելիկն իրենց համատեղ ուսումնասիրության մեջ առաջադրել և հաստատել կամ հերքել են առևտրային բանկերի գործունեության արդյունքների վրա ESG ծրագրերի ազդեցությունը: Հեղինակները հերքել են ESG ծրագրերի բացասական ազդեցությունը մինչև հարկումը շահույթի, ակտիվների շահութաբերության, ազատ դրա-

մական հոսքերի վրա: Հերքել են նաև ESG ծրագրերի դրական ազդեցությունը գին/շահույթ հարաբերակցության վրա: Մասամբ հաստատել են ESG ծրագրերի դրական ազդեցությունը ֆինանսական լծակի վրա, բացասական ազդեցությունը շահաբաժնի եկամտաբերության վրա: Հաստատել են նաև ESG ծրագրերի բացասական ազդեցությունը բետա գործակցի վրա, որը ընտրված բաժնետոմսի և շուկայի միտման կորելացիայի ցուցիչն է [4]: Ա. Հակոբյանը, Ք. Խաչատրյանը արձանագրել են դրական ֆինանսական արդյունքների և ESG ծրագրերի միջև հուսալի կապի առկայությունը [12]: Հեղինակներն ընդունելի են և ընդհանուր առմամբ, ESG ծրագրերը նպաստում են բանկերի երկարաժամկետ կայունությանը և մեծացնում նրանց գրավչությունը հաճախորդների և ներդրողների շրջանում, ինչը, ի վերջո, բարելավում է ֆինանսական արդյունքները, թեև կարճաժամկետ հեռանկարում կարող են ծախսեր առաջանալ այդ ծրագրերի իրականացման համար:

Հաջորդիվ դիտարկվել է բանկային տեխնոլոգիաների ազդեցությունը առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վրա, որը ևս դրական է որակվել: Բանկային տեխնոլոգիաների ձևավորմանը, կայացմանը և հետագա զարգացմանը անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ: Օ. Ի. Լավրոշինի խմբագրությամբ գրքում, հեղինակներն անդրադառնալով բանկային տեխնոլոգիաների զարգացման ընթացքին, ընդգծում են, որ մինչ 20 – թղ դարի կեսերը բանկերին բնորոշ էր գործունեության ավանդական տիպը, այսինքն, միջոցների ներգրավումը, դրանց վերաբաշխումը, գործունեության կառավարումը և այլն, որոնք իրականացվում էին բացառապես թղթային եղանակով և անմիջապես բանկում: Բանկային տեխնոլոգիաների ներդրումը ամենևին չհակասեց բանկային գործունեության ավանդական տիպին, հակառակը, վերջինս ընկած է բանկային տեխնոլոգիաների հիմքում: Բանկերը պահպանել են նախկինում իրականացվող գործառնությունները, դրանք լրացվել են նոր տեսակներով՝ ապահովելով լրացուցիչ շահույթ, հաճախորդների վստահություն [11, էջ 233]:

Բանկային տեխնոլոգիաները բանկային գործունեության մեջ ներգրավված տեղեկատվական, հեռահաղորդակցության, համակարգչային տեխնոլոգիաների ամբողջությունն են կազմում: Դրանք իրենցից ներկայացնում են մեթոդների համալիր, որոնք ապահովում են տեղեկատվության պահպանումը, մշակումը, փոխանցումը և ցուցադրումը: Դրանք բանկերում օգտագործվող տարբեր հեռահաղորդակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների, համակարգչային ցանցերի, ծրագրային արտադրանքների, ներքին ընթացակարգերի, ռիսկերի կառավարման մոդելների և այլնի ամբողջությունն են [7]:

Պ. Ա. Եֆրեմովը, Ի. Ի. Վասիլևը գտնում են, որ առևտրային բանկերի միջև աճող մրցակցության ֆոնին ակնհայտ է դառնում բանկային տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը առևտրային բանկերում՝ մրցակցային առավելություններ ձեռք բերելու համար: Հեղինակներն առաջարկում են բանկային տեխնոլոգիաները դասակարգել ըստ այն գործառնությունների, որոնք վերապահված են դրանց: Կախված կատարվող գործառնություններից՝ բանկային տեխնոլոգիաները կարելի է բաժանել.

- տեղեկատվական բանկային տեխնոլոգիաներ (օբյեկտային, գործառնական, փաստաթղթային),
- վիզուալիզացիայի և հաղորդակցման բանկային տեխնոլոգիաներ (հաճախորդի հետ շփում),
- էլեկտրոնային բանկային տեխնոլոգիաներ (ինտերնետ բանկինգ և մոբայլ բանկինգ, վճարումների ընդունման համակարգեր) [8]:

Վերոնիյայից տրամաբանորեն հետևում է, որ առևտրային բանկերն ամենից հաճախ օգտագործում են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ տարբեր բանկային տեխնոլոգիաներ՝ ներդրված տարբեր տեխնոլոգիական պրոդուկտներում և բարդ լուծումներում (ավտոմատացված բանկային համակարգեր և այլն):

Անդրադառնալով թեմայի համատեքստում բանկային տեխնոլոգիաների դերին՝ պետք է նշել, որ բանկային տեխնոլոգիաների կիրառումը դրականորեն է ազդում առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վրա՝ նվազեցնելով գործառնական ծախսերը, ավելացնելով հավատարիմ և պոտենցիալ հաճախորդների թվաքանակը և եկամուտը և բարելավելով ռիսկերի կառավարումը: Այնուամենայնիվ, բանկերը պետք է նաև հաշվի առնեն տեխնոլոգիաների ներդրման և կիրքեր սպառնալիքներից պաշտպանվելու ծախսերը:

Անցում կատարելով ներքին սոցիալական պատասխանատվության և ֆինանսական արդյունքների միջև կապի ուսումնասիրությանը՝ պետք է նշել, որ այն ուղղակի բնույթ է կրում: Առևտրային բանկերի ներքին սոցիալական պատասխանատվությունը դրականորեն է ազդում ֆինանսական արդյունքների վրա՝ բարելավելով կորպորատիվ մշակույթը, բարձրացնելով արտադրողականությունը, նվազեցնելով ռիսկերը և ներգրավելով սոցիալապես պատասխանատու ներդրողներին:

Ընդհանրացնելով պետք է նշել, որ ոչ ավանդական՝ այլընտրանքային մոտեցումների դերը դրական ֆինանսական արդյունքների ապահովման գործում ամենևին չի զիջում ավանդական մոտեցումներին: Ասվածը միտք չունի նսեմացնել ավանդական մոտեցումների դերը, այլ, հակառակը, պետք է միջոցառումներ ձեռնարկել երկու մոտեցումները գույժորդելու ուղղությամբ:

Աղյուսակ 1. ՀՀ երեք առաջատար բանկերի գործունեության արդյունավետության գնահատման տարեկան ցուցանիշները [13, 14, 15]

Հ/Հ	Ցուցանիշներ	«Այրշիբանկ» ՓԲԸ						«ԱՍԵՐԲԱՐԱՆԿ» ՓԲԸ						«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ					
		2021	2022	2023	2021	2022	2023	2021	2022	2023	2021	2022	2023	2021	2022	2023			
Ելակետային տվյալներ (Չափման միավորը՝ մլն ՀՀ դրամ)																			
1	Ընդամենը ակտիվներ	1010410	1557786	1634863	1096387	1251830	1409581	546930	664939	783794									
2	Սեփական կապիտալ	100069	145563	189582	128931	172052	195787	88193	109402	133110									
3	Ընդամենը պարտավորություններ	910342	1412223	1445281	966456	1079778	1213794	458737	555537	650684									
4	Զուտ շահույթ	13349	62649	62147	19117	43062	46613	9608	22570	28393									
5	Ժամկետանց վարկեր	20725	10263	16879	11857	6033	5463	0	436	644									
6	Վարկային պրոբֆել	574313	531424	671580	632143	699082	934137	341295	408439	455199									
7	Պարտքային կորստի զծով պահուստ	14292	19696	24884	16406	15116	15028	8320	5982	6048									
Հաշվարկային (Չափման միավորը՝ %)																			
Ծախույթաբեռության գործակիցներ																			
8	Ակտիվների ((տող 4 / տող 1) * 100%)	1,32	4,02	3,80	1,74	3,44	3,31	1,76	3,39	3,62									
9	Սեփական կապիտալի ((տող 4 / տող 2) * 100)	13,34	43,04	32,78	14,83	25,03	23,81	10,89	20,63	21,33									
Վարկային պրոբֆելի որակի գործակիցներ																			
10	Վարկային ակտիվության ((տող 6 / տող 1) * 100%)	56,84	34,11	41,08	57,66	55,84	66,27	62,40	61,43	58,08									
11	Ծածկման ((տող 7 / տող 5) * 100%)	68,96	191,91	147,43	138,37	250,56	275,09	0,00	1372,02	939,13									
12	Ժամկետանց վճարումների ((տող 5 / տող 6) * 100%)	3,61	1,93	2,51	1,88	0,86	0,58	0,00	0,11	0,14									
13	Հնարավոր կորուստների պահուստի բավարարության ((տող 7 / տող 6) * 100%)	2,49	3,71	3,71	2,60	2,16	1,61	2,44	1,46	1,33									
14	Ժամկետանց վարկերի մասնաբաժինն ակտիվներում ((տող 5 / տող 1) * 100%)	2,05	0,66	1,03	1,08	0,48	0,39	0,00	0,07	0,08									
15	Վարկային պրոբֆելի ռիսկի ((տող 6 - տող 7) / տող 6) * 100%)	97,51	96,29	96,29	97,40	97,84	98,39	97,56	98,54	98,67									

«Հ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների ավանդական և այլընտրանքային մոտեցումների գույքակցումը»

«Հ բանկային համակարգի արդյունավետության գնահատման ընդհանուր ցուցանիշներից անցում է կատարվել առանձին բանկերի արդյունավետության գնահատմանը: Գործակիցները հավաքագրվել, ապա և հաշվարկվել են առաջատար 3 բանկերի՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի և «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի տվյալներով: Բանկերի ընտրությունը պայմանավորված է եղել 2023 թ-ին ունեցած զուտ շահույթի մեծությամբ:

Արդյունակի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ընտրված բանկերից բոլորի դեպքում էլ ակտիվների շահութաբերության մակարդակը օպտիմալ տիրույթում չի գտնվում: Դրական կարելի է որակել այն, որ 2022 և 2023 թթ-ի տվյալներով ընտրված բանկերից բոլորն էլ գերազանցել են 2021 թ-ի ցուցանիշը: Չուտ շահույթի ապահովման համար ակտիվներն առավել արդյունավետ օգտագործվել են «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 2022 թ-ին, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 2022 թ-ին և «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 2023 թ-ին:

Ընտրված բանկերի գործունեության արդյունավետության մասին վկայող հաջորդ ցուցանիշը սեփական կապիտալի շահութաբերության ցուցանիշն է, որն, ինչպես արդեն նշվել է սույն հոդվածի մեթոդաբանության հատվածում, օպտիմալ է համարվում 10-15% միջակայքում գտնվելու պայմանում: Ուսումնասիրվող երեք բանկերն էլ 2022 և 2023 թթ-ին ի համեմատ 2021 թ-ի էականորեն բարելավել են սեփական կապիտալի շահութաբերության ցուցանիշը: Առավելագույն արդյունք է ապահովել «Արդշինբանկ» ՓԲԸ-ն 2022 թ-ին, ինչը պայմանավորված է եղել զուտ շահույթի բարձր ցուցանիշով: Մյուս երկու բանկերի կողմից սեփական կապիտալի շահութաբերության՝ ի համեմատ առաջին բանկի ցածր ցուցանիշը պայմանավորված է սեփական կապիտալի ցուցանիշի շարունակական աճով:

Առևտրային բանկերի գործունեության արդյունավետության մասին են վկայում, մասնավորապես, վարկային պորտֆելի որակի գործակիցները: Վարկային ակտիվության գործակիցը ցույց է տալիս, թե որպիսի վարկային քաղաքականություն է վարում ընտրված բանկերից յուրաքանչյուրը: Այն դեպքում, երբ գործակիցը գերազանցում է 60%-ը, բանկը վարում է ագրեսիվ վարկային քաղաքականություն, ցուցանիշի՝ 50-60% միջակայքում գտնվելու դեպքում բանկի վարկային քաղաքականությունը համարվում է օպտիմալ, 0-50%-ի դեպքում՝ պահպանողական [9]: Ըստ տվյալների ագրեսիվ վարկային քաղաքականություն 2023 թ-ին վարել

է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն, 2021 և 2022 թթ-ին՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն: Բացառությամբ 2022 թ. և 2023 թ-ին «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից վարվող պահպանողական վարկային քաղաքականության՝ մնացյալ տարիներին ուսումնասիրվող բանկերը վարել են օպտիմալ վարկային քաղաքականություն:

Բանկերի գործունեության արդյունավետության մասին վկայող հաջորդ գործակիցը ծածկման գործակիցն է: Այն ցույց է տալիս, թե պահուստի որ մասնաբաժինն է բաժին ընկնում 1 դրամ ժամկետանց պարտքին: Գործակիցն օպտիմալ մակարդակում է գտնվում «Արդշինբանկ» ՓԲԸ-ում և «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում ուսումնասիրվող բոլոր տարիների համար: Իսկ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում 2022 և 2023 թթ-ին ոչ օպտիմալ մակարդակում է: Ժամկետանց վճարումների գործակիցը, որը օպտիմալ մակարդակում է, եթե չի գերազանցում 5%-ը, այդ մակարդակում է գտնվում բոլոր բանկերի դեպքում ուսումնասիրվող բոլոր տարիների համար: Հնարավոր կորուստների պահուստի բավարարության գործակիցը չպետք է ցածր լինի 2%-ից: Օպտիմալ մակարդակում չի գտնվում 2023 թ-ին «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում և 2022, 2023 թթ-ին «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում: Բացասական է որակելի այն, որ 2023 թ-ին ի համեմատություն 2022 թ-ի «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում սույն ցուցանիշը շարունակել է անկում ապրել: Կարծում ենք, որ այդ բանկում կարիք կա վերանայել պահուստի մեծությունը: Ժամկետանց վարկերի մասնաբաժինն ակտիվներում օպտիմալ է համարվում այն դեպքում, երբ չի գերազանցում 0-2 տոկոսային կետը: Կարելի է ասել, որ ուսումնասիրվող բոլոր տարիներին «Հ առաջատար երեք բանկերն էլ ապահովել են այս ցուցանիշի գծով օպտիմալ մակարդակը:

Վարկային պորտֆելի ռիսկի մակարդակը օպտիմալ է համարվում այն դեպքում, երբ հաշվարկված ցուցանիշը ցածր չէ 60-70 տոկոսային կետից: Ուսումնասիրվող երեք բանկերն էլ 2021-2023 թթ-ին ապահովել են սույն գործակցի օպտիմալ մակարդակը:

Կարծում ենք, որ ուսումնասիրվող բոլոր բանկերն էլ պետք է միջոցներ ձեռնարկեն զուտ շահույթի ավելացման ուղղությամբ, քանի որ հիմնական խնդիրը դիտվել է շահութաբերության ցուցանիշների համատեքստում: Այսպիսով, «Հ բանկային համամարզը ֆինանսական արդյունքների առումով զարգանում է բնականոն հունով, սակայն ապահովված գերշահույթի որակյալ լինելու վերաբերյալ գնահատականներ հնարավոր կլինի տալ տարիներ անց միայն, քանի որ էականորեն ծանրացել է բնակչության վարկային բեռը, հետևաբար և ավելացել չվերադարձման ռիսկը:

« – ում բանկերի եկամուտների ավելացման ուղիների նախանշման համատեքստում պետք է նկատի առնել, որ բանկերի տոկոսային եկամուտների էական մասը ներհոսում է տնտեսության իրական հատվածի վարկավորման արդյունքում: Պետք է խորացնել բանկերի և տնտեսության իրական հատվածում գործունեություն ծավալող կազմակերպությունների համագործակցությունը՝ ներգրավելով նաև ՀՀ ԿԲ արտոնությունների շնորհման մեխանիզմները: Առաջարկում ենք բանկերի տոկոսային եկամուտներն ավելացնել կիրառելով վարկավորման արտոնություններ վարկային ռեսուրսների ներգրավման կարիք ունեցող և ոչ ռիսկային ոլորտներում գործունեություն ծավալող այն կազմակերպություններին, որոնք համարվում են խոշոր հարկատուներ: Այս համատեքստում, կարծում ենք, անհրաժեշտ է ՀՀ ԿԲ կողմից մշակել և ներդնել այնպիսի մոտեցումներ, որոնք հնարավորություն կընձեռեն և լիազորություն կտան առևտրային բանկերին վերաֆինանսավորման տոկոսադրույքի համեմատությամբ առավել ցածր տոկոսադրույքով վարկեր տրամադրել այն ոլորտներին, որոնք էական եկամտային հոսքեր են ապահովում պետական բյուջե: Ոլորտները պետք է լինեն ցածր ռիսկայնության և վերազնահատվեն յուրաքանչյուր տարի մոնիթորինգների անցկացման միջոցով: Այս առաջարկությունը ենթադրում է նաև առևտրային բանկերի այդ վարկերի օգտագործման առումով լրացուցիչ վերահսկողական գործառնությունների տրամադրում՝ ապահովելու համար վարկային ռեսուրսների խիստ նպատակային օգտագործումը: Մա թույլ կտա ապահովել տոկոսային եկամուտների էական ներհոսք, զուգահեռաբար շահութահարկի ցուցանիշի ավելացում, ինչպես նաև տնտեսության զարգացում և պետական բյուջե կազմակերպությունների կողմից վճարվող հարկային միջոցների ավելացում:

Քանի որ ՀՀ – ն համարվում է ԵԱՏՄ անդամ երկիր և մոտ ապագայում անկախ որևէ կողմի ցանկությունից այդ փաստը լինելու է իրողություն, կարծում ենք, որ անհրաժեշտ է ստեղծել նոր ինստիտուտ՝ ԵԱՏՄ անդամ - երկրներում կենտրոնական բանկերի տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնների ցանց: Այն թույլ կտա արդյունավետորեն տարածել բանկային տեխնոլոգիական տեղեկատվությունը և ԵԱՏՄ անդամ - երկրներում գործող բանկերի շրջանում գործընկերներ փնտրել նորարարական նախագծեր իրականացնելու համար: Այդ ցանցը պետք է դառնա ԵԱՏՄ բանկային կառուցվածքի առանձին օղակ, ինչպես, օրինակ, Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտը: ԵԱՏՄ անդամ – երկրներում բանկային տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնների

ցանցը կնպաստի բանկերում նորարարական բիզնեսի զարգացմանը և բարձր տեխնոլոգիաների առևտրայնացմանը ինտեգրացիոն տարածքում:

ԵԱՏՄ անդամ-երկրներում բանկային տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնների ցանցի առաջնահերթ խնդիրները պետք է լինեն.

1) գիտության և բանկային գործունեության միջև տեխնոլոգիաների միջազգային փոխանցումը,

2) բարձր տեխնոլոգիաների մշակման և ներդրման գծով միջազգային համագործակցություն ստեղծելու համար բանկային գործընկերների որոնումը:

Այսպիսով, ամփոփելով ԵԱՏՄ անդամ երկրների միջև բանկային տեխնոլոգիաների միջազգային փոխանցման արդյունքում ձևավորված և զարգացման պահանջ ունեցող ինովացիոն գործընթացները՝ նշենք, որ անհրաժեշտ են իրավական դաշտի բարելավման հետագա միջոցառումներ, որոնք պետք է ներառեն.

1) ԵԱՏՄ բանկային ինովացիոն գործունեության մասնակիցների միջև փոխգործակցության մեխանիզմի կատարելագործում.

2) ԵԱՏՄ անդամ-երկրների սոցիալ-տնտեսական զարգացման նորարարական կողմնորոշում.

3) տեղեկատվական աջակցության զարգացում.

4) աջակցություն մի շարք կրթական ծառայությունների և շարունակական կրթության համակարգի զարգացմանը բանկային համատեքստում:

Բանկերում տոկոսային եկամուտների ավելացման կարևորագույն ուղի է բանկային աշխատակազմի որակավորման մակարդակի բարձրացումը: Այս առումով նպատակահարմար է առևտրային բանկերի վարկային բաժիններում աշխատող անձանց համար իրականացնել ոլորտային վերապատրաստումներ՝ ուշադրությունը կենտրոնացնելով այդ ոլորտներում վարկային ռեսուրսների տրամադրման հնարավորության գնահատման համատեքստում հավանական ռիսկերի ուսումնասիրության, ինչպես նաև այդ ոլորտներում վարկային ռեսուրսների գերարդյունավետ ներդրման մոտեցումների դիտարկման վրա՝ միտում ունենալով ստացված գիտելիքները փոխանցել ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ խուսափելու համար վարկերի չմարման հավանականությունից: Այս նպատակն առավել արդյունավետ կկենսագործվի, եթե բանկերում վարկային բաժիններում տնտեսության ճյուղերում գործունեություն ծավալող սուբյեկտներին վարկավորող աշխատակիցները առանձնացվեն ըստ այդ հատվածներում մասնագիտացման:

Առևտրային բանկերին տոկոսային լրացուցիչ եկամուտներ կարող են ապահովել նաև պատասխանատու վարկառուների վարկավորման գործընթացը խրախուսելու նպատակով տնտեսության կարևոր ոլորտներում գործունեություն ծավալող կազմակերպությունների համար բանկերի առանձին ծառայություններից /փոխանցումներ, քարտերի, հաշիվների սպասարկում և այլն/ օգտվելու արտոնությունների նախատեսումը՝ սակագների նվազման տեսքով, ինչը նաև լրացուցիչ եկամուտներ կապահովի թե՛ բանկի, թե՛ պետությանը:

Պետք է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ առաջնայությունը տրվում է թվային տվյալներով բանկերի արդյունավետության գնահատմանը, այնուամենայնիվ, գուտ շահույթի ցանկալի մեծության ապահովումը հնարավոր է միայն ESG ծրագրերի, բանկային տեխնոլոգիաների և կորպորատիվ պատասխանատվության պատշաճ իրագործման դեպքում:

Հայկական բանկերի ESG ծրագրերի նկատմամբ հետաքրքրությունը շարունակաբար ավելանում է: Մասնավորապես, 2023 թ-ին «Արդշինբանկ» ՓԲԸ-ն Euromoney ամսագրի կողմից արժանացել է Հայաստանի «Լավագույն կորպորատիվ» և «Լավագույն ESG-Բանկ» անվանակարգերին: «Euromoney Awards for Excellence» մրցույթն անց է կացվում ամեն տարի, և դրա արդյունքներով միջազգային հեղինակավոր փորձագետներն ընտրում են տարբեր անվանակարգերում լավագույններին աշխարհի 100 երկրներից: Բանկի գործունեության նման բարձր գնահատականը պայմանավորված է կանաչ բանկինգի վերափոխման և զարգացման ուղղությամբ շարունակաբար տարվող աշխատանքներով և ԲՄԿ սկզբունքների ներդրմամբ, որոնք միտված են նորարարական և արդյունավետ տնտեսությանն անցնելու տեսլականին: Բանկը հանրապետությունում առաջիններից մեկն էր, որ սկսեց ֆինանսավորել արհեստական բանականության օժտված արևային էլեկտրակայանների կառուցումը: Այլընտրանքային էներգետիկայի ոլորտում Բանկն արդեն 40 մլն ԱՄՆ դոլարի ներդրում է կատարել, որի շնորհիվ կառուցվել է 14 էլեկտրակայան: Մասնավորապես, Արագածոտնի մարզում գտնվող ամենամեծ արևային էլեկտրակայանը: 2023 թ-ին Բանկի կողմից միջոցներ են ներդրվել արևային էներգիայի օգտագործմանն անցնելու ուղղությամբ, ինչի շրջանակներում մասնաճյուղերի տանիքներին տեղակայվել են արևային պանելներ: Նպատակադրվել է 2025 թ.-ին նվազեցնել ածխաթթու գազի արտանետումը միջավայր 38.2 տոննայով: Ինչ վերաբերում է սոցիալական պատասխանատվությանը, ապա «Արդշինբանկ» ՓԲԸ-ն վաղուց և հաջողությամբ ֆինանսավորում է

մշակույթի և կրթության ոլորտների զարգացումը, ակտիվորեն աջակցում Չինվորի տուն վերականգնողական կենտրոնին, մասնակցում բազմաթիվ բարեգործական նախագծերի, այդ թվում՝ միջազգային:

«ԱՄԵՐԻՎԲԱՆԿ» ՓԲԸ-ն ևս պատշաճ ուշադրության է արժանացնում ԲՄԿ ծրագրերի ներդրումը: «ԱՄԵՐԻՎԲԱՆԿ» ՓԲԸ-ն մտադիր է դառնալ տարածաշրջանի առաջատար «կանաչ» բանկը. այն նպատակ ունի օգնել հասարակությանն անցնել տնտեսության այնպիսի մոդելի, որը կլինայի ռեսուրսները, կնվազեցնի ածխաթթու գազի արտանետումները և կլինի էկոլոգիապես կայուն: Վարկային և ներդրումային որոշումներ կայացնելիս «ԱՄԵՐԻՎԲԱՆԿ» ՓԲԸ-ն հաշվի է առնում կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերը, դրանով իսկ նպաստելով մեր երկրի ընդհանուր կայուն զարգացմանը: Իր առօրյա գործառնության ընթացքում «ԱՄԵՐԻՎԲԱՆԿ» ՓԲԸ-ն առաջնորդվում է «կանաչ» և էկոլոգիապես արդյունավետ մոտեցումներով:

2009 թ. ի վեր «ԱՄԵՐԻՎԲԱՆԿ» ՓԲԸ-ն էներգաֆինայրության ու էներգաարդյունավետության ծրագրերի ֆինանսավորմանն է ուղղել ավելի քան 200 մլն ԱՄՆ դոլար տարբեր խոշոր միջազգային ֆինանսական հաստատությունների և այնպիսի ազդեցիկ ներդրողների աջակցությամբ, ինչպիսիք են Նիդերլանդների զարգացման բանկը (FMO), responsAbility Investments AG-ն, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ), Ֆրանսիական զարգացման ֆինանսական գործակալությունը (PROPARCO), Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), Ավստրիական զարգացման բանկը (ՕԵԵԲ), Գերմանական ներդրումային կորպորացիան (DEG), Կլիմայական գործընկերության համաշխարհային հիմնադրամը (GCPF) և ուրիշներ: Ամերիաբանկն իր բիզնես գործընթացներում հաջողությամբ ներդրել է հիմնարար կայունությանը, շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարմանն ուղղված քաղաքականություն՝ ապահովելու համար, որպեսզի մատուցվող ֆինանսական ծառայությունները չհանգեցնեն շրջակա միջավայրի և սոցիալական բացասական ազդեցության: «ԱՄԵՐԻՎԲԱՆԿ» ՓԲԸ-ն խնդիր է դրել հավասարակշռել սոցիալական, էկոլոգիական և տնտեսական գործոնները՝ կիրառելով լավագույն միջազգային փորձը էկոլոգիական և սոցիալական ռիսկերի կառավարման բնագավառում:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն ևս գործունեություն է իրականացնում ԲՄԿ ծրագրերի շրջանակներում: «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն, ձգտելով նվազեցնել սոցիալական և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների ի հայտ

գալու հնարավոր ռիսկերը, 2011 թվականի ապրիլ ամսին մշակել և ներդրել է սոցիալական և շրջակա միջավայրի ռիսկերի կառավարման համակարգ, որի շնորհիվ բանկն արդեն արդյունավետ կառավարում է իր կողմից ֆինանսավորվող գործարքների հետևանքով բնության և մարդկության վրա հնարավոր բացասական ազդեցությունների ռիսկերը: Կառավարման այդ համակարգի ներդրման գործընթացում բանկը համագործակցել է մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, որոնք ամեն կերպ աջակցել են՝ փոխանցելով սոցիալական և շրջակա միջավայրի պահպանման լավագույն փորձն ու հմտությունները: Բանկի մի շարք աշխատակիցներ վերապատրաստվել են միջազգային ֆինանսական կազմակերպությունների համապատասխան որակավորված մասնագետների կողմից: Այսպիսով 2011 թվականի ապրիլ ամսվանից Բանկի կողմից ֆինանսավորվող ցանկացած գործունեություն, մինչև ֆինանսավորումը, մանրակրկիտ կերպով ուսումնասիրվում է և կատարվում է ռիսկի գնահատում, որը նշանակում է բնակչության առողջությանը, անվտանգությանը և բարեկեցությանը հասցվող վնասի գնահատում:

Բանկերի արդյունավետության ցուցանիշների վրա ազդում են նաև բանկային տեխնոլոգիաները: Այն հանգամանքը, որ նոր ժամանակաշրջանում հայաստանյան բանկերը բավականին արդյունավետ կերպով մշակում և ներդնում են նոր տեխնոլոգիական ծառայություններ, հավաստվում է ՀՀ առանձին բանկերի՝ միջազգային դիրքերի վերաբերյալ Mobile Business Banking և Business Online Banking հետազոտություններում զբաղեցրած դիրքով: 2023 թվականին նշված հետազոտությունների փորձագիտական խորհրդի ՓՄՁ բանկային գործակալությունը ներկայացրել է Mobile Business Banking 2023 հետազոտության արդյունքները՝ գնահատելով Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի բանկերի միջև մոբայլ բանկինգի արդյունավետությունը: Վարկանիշները ձևավորվել են հավելվածների ներբեռնումների քանակի հիման վրա՝ առնվազն 10000, իսկ օգտատերերի գնահատականները՝ առնվազն 3,5 GooglePlay և AppStore հարթակներում: Այս վարկանիշում Հայաստանի «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն 20 հնարավորից զբաղեցրել է 20-րդ տեղը, ինչը վկայում է զարգացման ներուժի մասին [16]: Իր դիրքերը բարելավելու համար բանկին առաջարկվում է վերլուծել ավելի հաջողակ բանկերի ռազմավարությունները և հնարավորություններ փնտրել հաջողված գործելակերպը դրանց հարմարեցնելու համար: 2023 թ-ին հրապարակվել է նաև Business Online Banking

հետազոտությունը, որում գնահատվել են թվով 50 բանկեր 120 չափանիշներով: Բիզնեսի համար նախատեսված նոր ծառայությունների գործարկման և հաջող իրացման արդյունքում «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն, «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն, «Արդշինբանկ» ՓԲԸ-ն համարվել են առաջատարներ՝ արձանագրելով բարձր չափանիշներ սույն համատեքստում [17]:

ՀՀ-ում գործունեություն իրականացնող առևտրային բանկերը ունեն առցանց նոր ծառայություններ մատուցելու բոլոր գործիքակազմերը: Առցանց ծառայությունների առումով թերություններ նկատելի են «Մեյլաթ բանկ» ՓԲԸ-ում և «Ֆասթ բանկ» ՓԲԸ-ում: Եթե «Ֆասթ բանկ» ՓԲԸ-ն, միայն վերջերս ստացած լինելով բանկի կարգավիճակ, արդեն իսկ ունի Mobile banking հավելված, ապա «Մեյլաթ բանկ» ՓԲԸ-ն այդ ուղղությամբ որևէ գործողություն չի ձեռնարկում:

Որպեսզի հնարավոր լինի արտաքին դիտարկման միջոցով պատկերացում կազմել, թե հայաստանյան բանկերի Mobile banking հավելվածները որպիսի արդյունավետություն ունեն, ուսումնասիրվել են դրանց վերաբերյալ հաճախորդների կարծիքները Google Play Market-ում: «Բիրոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ի բջջային հավելվածը App Store-ում հանրաճանաչությամբ առաջինն է, թեև վարկանիշների թիվը համեմատաբար փոքր է: Երկրորդ տեղում Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն է՝ օգտատերերի կողմից 4.7 ամփոփ վարկանիշով: Հաջորդը Յունիբանկ ՓԲԸ-ն է՝ 4.6, իսկ չորրորդ տեղում Ինեկոբանկ ՓԲԸ-ն է՝ 4.5 վարկանիշով: Ամենացածր վարկանիշով վերջին տեղում ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ-ն է, որը բացասական արձագանքների է արժանանում նաև օֆլայն հարթակներում: Հաճախորդների հիմնական բողոքները կապված են թարմացման հետաձգումների, ծրագրային սպահովման խափանումների, գործարքների հաճախակի ձախողումների և հավելվածների ոչ ավտոմատ թարմացումների հետ:

Ի լրումն բջջային հավելվածների լայն կիրառման, NFC անկոնտակտ վճարումների ներդրումը զգալիորեն պարզեցրել է բանկային գործարքների կատարման գործընթացը՝ թույլ տալով գործարքներն իրականացնել սմարթֆոնի, այլ ոչ թե սովորական քարտի միջոցով: Վճարում կատարելու համար պարզապես պետք է հպել հեռախոսը POS տերմինալին: NFC-ն ի սկզբանե հասանելի էր Android սարքերի համար՝ սկսած 5-րդ տարբերակից, իսկ 2022 թվականին Apple Pay-ը հասանելի դարձավ նաև iOS սարքերի համար: Ներկա պահին մշակվում է Google Pay-ի հետ ինտեգրումը: NFC-ն օգտագործելու համար սմարթֆոնը պետք է աջակցի այս գործառնությին և կարողանա «կարդալ»

թվային քարտերը: NFC տեխնոլոգիան անհայում վճարման ամենապարզ և ամենաարագ մեթոդներից մեկն է, որն ընդունելի է աշխարհի ցանկացած վաճառքի կետում, որտեղ աջակցվում է անհայում քարտերի սպասարկումը:

Ուսումնասիրելով ՀՀ բանկային համակարգում շարունակարար ներդրվող նոր ծառայությունները՝ Հայաստանում «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն առևտրային բանկերի շարքում առաջատար դիրք է զբաղեցնում միջազգային վճարային համակարգերի ինտեգրման գործում: Բանկը դարձավ առաջինը երկրում, որն իր հաճախորդներին առաջարկեց առցանց մուտք գործել SWIFT համակարգ՝ ելքային վճարումների կարգավիճակը վերահսկելու համար: Սա Ամերիաբանկի հաճախորդներին թույլ տվեց իրական ժամանակում հետևել գործարքներին առցանց և մոբայլ բանկային հարթակների միջոցով՝ առանց լրացուցիչ հարցումների անհրաժեշտության: Բացի այդ, ԱՄԵՐԻԱԲԱՆԿՆ առաջինն էր, որ ներկայացրեց SWIFT GPI-ի գլոբալ վճարումների նորարարությունը, ինչը հանգեցրեց նրան GPI հարթակի լիարժեք մասնակից ճանաչմանը: Սա բանկի հաճախորդներին նոր հնարավորություններ տվեց միջազգային վճարումները կառավարելու համար, ներառյալ թղթակից բանկերի միջոցով գործարքները կատարելու, մերժելու կամ վերադարձնելու գործառնությունները [18]:

Վերջին տարիներին ՀՀ բանկային համակարգում նաև խիստ կարևորություն է տրվել կորպորատիվ պատասխանատվությանը: Վերջինիս դերը խիստ կարևորվում է, քանի որ նպաստում է աշխատակիցների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Ուսումնասիրվող երեք բանկերն էլ իրենց սոցիալական քաղաքականությունն իրականացնում է թե՛ արտաքին, թե՛ ներքին ուղղություններով՝ հանդես գալով որպես կորպորատիվ սոցիալական պատասխանատու կառույց:

«Արդշինբանկ» ՓԲԸ-ն, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն և «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգը ներկայացնում են սեփական պաշտոնական կայք էջերում, սակայն դրա արդյունքների վերաբերյալ համալիր հաշվետվական տեղեկատվություն չեն հաղորդում: Օրինակ, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է, որ պատասխանատու է այն հասարակության բարօրության համար, որտեղ գործունեություն է ծավալում: Իր կորպորատիվ քաղաքականության շրջանակներում «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է, որ Բանկը և իր աշխատանքային անձնակազմը գիտակցում են իրենց պատասխանատվությունը աշխարհի համար, որտեղ ապրում են և հավատում են, որ Բանկը, որպես կառույց, և նրա աշխատա-

կիցներից յուրաքանչյուրը նպաստում է դրա բարելավմանը: «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հիմքում թե՛ իր աշխատակիցների, թե՛ ՀՀ քաղաքացիների կարիքների ընկալումն է, դրանց համար պատասխանատվության ստանձնումը և հնարավորության սահմաններում դրանց բավարարումը: «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն փորձում է ոչ միայն նպատակային լուծումներ տալ, այլև ապահովել զարգացում, կայացում, անվտանգ կենսագործունեություն և դրական միջավայր՝ ի վերջո հասնելով կյանքի որակի էական բարելավման:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից իրականացվում է «Մտածի՛ր կանաչ» նախագիծը, որն ուղղված է նախ Բանկի ներսում բնության հանդեպ պատասխանատու վարքագծի ձևավորմանը, որն իրականացվում է ջրի ծախսի կրճատման, թղթի սպառումը նվազագույն հասցնելու, էներգիայի խնայման, աղբի տարանջատման, աշխատանքային առօրյայում վերամշակվող նյութերի օգտագործման միջոցով փորձելով ձևավորել պատասխանատու թիմային վերաբերմունք մեր երկրի և մոլորակի նկատմամբ և այդ փորձը դարձնել վարակիչ:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության թվում «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից նշվում է նաև իր աշխատակիցների համար մատչելի և հարմարավետ միջավայր ստեղծելը, որը ևս ներքին սոցիալական քաղաքականության տարր է: «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն փորձում է Բանկում աշխատող յուրաքանչյուր անձի օժտել աշխատանքային և ստեղծագործական ազատությամբ: Այդ նպատակով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում ձևավորված է նաև տրամադրող արտաքին միջավայր՝ գունեղ և նորարար լուծումներով հագեցած, հարմարավետ, ըստ նշանակության կահավորված աշխատասենյակներ, թեքահարթակներ, անխոչընդոտ աշխատանքային պայմաններ:

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի և «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը արտացոլում է բանկերի և դրանց աշխատակիցների հարգանքն ու հոգատարությունը միմյանց, մարդկանց, Երկիր մոլորակի նկատմամբ, ինչպես նաև բանկերի հոգատարությունն իրենց աշխատակիցների նկատմամբ: Այն, որ ուսումնասիրվող բանկերի աշխատանքային անձնակազմն ակտիվորեն ներգրավված է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության իրականացման գործում, վկայում է այն մասին, որ բանկերի ներքին սոցիալական քաղաքականությունը բավականին սահուն և աշխատակիցների համար նպաստավոր կերպով է իրականացվում:

Ուսումնասիրվող երեք բանկերի աշխատակիցները ղեկավար անձնակազմի հետ միասին ակտիվորեն մասնակցում են անվտանգ և բարենպաստ աշխատանքային պայմանների ստեղծմանը, փոխադարձ խորհրդատվություններ են անցկացվում այդ համատեքստում, որին ներգրավվում են նաև տեխնիկական խորհրդատուներ և քննարկվող հարցերում առավել մասնագիտացած անձինք: Բանկերում աշխատանքի վարձատրությունը զուգընթաց կիրառվում են ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական մոտիվացիոն մեխանիզմներ, որոնք աշխատակիցները ստանում են ժամանակի, մասնագիտական հմտությունների և փորձի դիմաց:

Տնտեսական գործունեության օպտիմալ իրականացման համար բանկերն օգտագործում են վարձատրության համակարգը որպես ունիվերսալ գործիք, որը նպաստում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, թիմային հարաբերությունների բարելավմանը և անձնակազմի հոսունության նվազեցմանը, որն իր հերթին պահպանում է աշխատանքային կարգապահությունը: Աշխատակիցների նկատմամբ հոգատարությունն ուղղակիորեն ազդում է նրանց արտադրողականության և հավատարմության վրա, ինչը, իր հերթին, բարձրացնում է աշխատանքի որակը և ֆինանսական կազմակերպությունների գործունեության շահութաբերությունը: Ըստ այդմ, բանկերի ղեկավարությունը ներկազմակերպական սոցիալական քաղաքականությունը պետք է դիտարկի որպես սոցիալական կապիտալի տեսության վրա հիմնված տնտեսական ռազմավարության մաս:

Այսպիսով, չթերագնահատելով ՀՀ բանկային համակարգի մնացյալ բանկերի գործունեությունը՝ այնուամենայնիվ պետք է ընդգծել, որ արդարացված է ուսումնասիրվող բանկերի կողմից ֆինանսական և արդյունավետության ցուցանիշների առավել բարձր արդյունքների ապահովումը, քանի որ վերջիններս առավել պատասխանատու մոտեցում են դրսևորում, հատկապես, ԲՄԿ ծրագրերի համատեքստում, ինչը գնահատական է ստանում նաև միջազգային հարթակներում:

Եզրակացություններ

Կարիք ենք համարում փաստել, որ մոտ ապագայում շահույթը, շահութաբերությունը կդադարեն լինել բանկերի գործունեության արդյունավետության ցուցիչներ: Թվայնացման ներկա մակարդակի և միտումների պայմաններում կարելի է ենթադրել, որ մրցակցության աճը և մրցունակության ապահովումը կարող է այլևս չսահմանափակվել բացառապես ՀՀ ներքին ֆինանսական համակարգի սահմաններով: Էքստենսիվ աճի և մասշտաբի էֆեկտի շնորհիվ շահույթի առավելագույն ցուցանիշի

ապահովումը և շահութաբերության բարելավումն այլևս չեն կարող դիտարկվել որպես զարգացման առաջնային ուղղություն, և անհրաժեշտ է, որ ՀՀ ֆինանսական համակարգն ապահովի միջնորդության որակական և շոշափելի փոփոխություններ: ԵԱՏՄ շրջանակներում բանկային համակարգերի գործունեության արդյունավետության ապահովման հիմնուղիներից կարող է լինել տեխնոլոգիաների միջազգային փոխանցման մեխանիզմների զարգացումը ԵԱՏՄ շրջանակներում բանկային համակարգերի ինտեգրացման գործընթացի խորացման, զարգացման համաչափության պայմաններում: Չնայած այն հանգամանքին, որ հանրային լայն շրջանակներում այս մասով առկա են և կլինեն անհամաձայնություններ, այնուամենայնիվ, ՀՀ-ն դեռևս ԵԱՏՄ անդամ երկիր է և այդպիսին է մնալու մոտ ապագայում, հետևաբար ինտեգրացման խորացումը և այդպիսով ապահովված արդիականացման միջոցով տոկոսային եկամուտների ներքո

Բանկերի արդյունավետությունն ուղղակիորեն կախված է ESG ծրագրերի ինտեգրումից, ժամանակակից տեխնոլոգիաներից և կորպորատիվ պատասխանատվությունից: ESG ծրագրերն օգնում են նվազեցնել գործառնական ծախսերը և նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի խախտումների հետ կապված ռիսկերը՝ միաժամանակ բարելավելով բանկի հեղինակությունը՝ հոգալով աշխատակիցների և հաճախորդների մասին: Բանկային առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործումը, ինչպիսիք են ավտոմատացումը և մեծ տվյալների վերլուծությունը, օպտիմիզացնում են գործընթացները և բարելավում հաճախորդների փորձը: Կորպորատիվ պատասխանատվությունը և թափանցիկությունը օգնում են զարգացնել հաճախորդների և ներդրողների վստահությունը՝ հանգեցնելով կայուն աճի և բանկի ընդհանուր գործունեության բարելավմանը:

Օգտագործած գրականության ցանկ

1. **Մովսիսյան Թ. Հ.** «Հաշվապահական հաշվառում» (երկրորդ՝ լրամշակված հրատարակություն). – Եր., «ԹՄ Առևտրի» ՓԲԸ, 2020. – 552 էջ
2. **Մարգարյան Ա. Չ., Առաքելյան Կ. Ա.** «Տնտեսական գործունեության վերլուծություն»: Ուսումնական ձեռնարկ տնտեսագիտական մասնագիտությունների բակալավրիատի ուսանողների համար (տ.գ.դ. պրոֆ. Ա.Չ.Մարգարյանի խմբագրությամբ). – Եր.: «Տնտեսագետ», 2005. – 446 էջ
3. **Մարգարյան Ա. Հ., Մարջանյան Ա. Մ., Օգանեզովա Ն. Ս.** «Հաշվապահական հաշվառում»: Ուսումնական ձեռնարկ տնտեսագիտական մասնագիտությունների համար, ՀՊՏՀ. – Եր.: Հեղ. Հրատ., 2014. – 338 էջ

4. **Белик И. С., Дущинин А. С., Никулина Н. Л.** Влияние ESG-факторов на финансовое состояние и инвестиционную привлекательность российских публичных компаний // *Управленец*. 2022., Т. 13, № 6. С. 44–55.
5. **Вагазова Г. Р., Лукьянова Е. С.** Сущность финансовых результатов деятельности предприятия // *Молодой ученый*. 2015. №11.3. С. 13-15.
6. **Власова Н. С., Корниаш В. С.** Анализ финансовых результатов деятельности организации // *Деловой вестник предпринимателя*. 2021., №4 (2). С.19-24.
7. **Дубинин М. В.** Банковские технологии: сущность, история развития и перспективы / М. В. Дубинин // *Финансы и кредит*. 2007, № 34. С. 57 - 63.
8. **Ефремов П. А., Васильев И. И.** Банковские технологии на современном этапе // *Финансовые рынки и банки*. 2018. №2. С. 42–48.
9. **Машнина, Е. Н.** Практические аспекты финансового анализа эффективности деятельности банка / Е. Н. Машнина // *Вестник Белорусского государственного экономического университета*. N 6., 2010, С. 87-93.
10. **Псарева Ю. А.** Проблемы анализа финансовых результатов и пути их решения. // *Молодой ученый*. 2021. № 49 (391). С. 112-115.
11. **Современные банковские продукты и услуги: учебник / коллектив авторов: под ред. О. И. Лаврушина.** – Москва: КНОРУС, 2021. - 302 с.
12. **Накобыан А., Khachatryan Q.** Issues of reporting organizations financial results in the ESG framework. *Economics, Finance and Accounting*, 2024., 1(13), p. 58.
13. <https://ardshinbank.am/Information/financial-reports?lang=hy> (Մուտքի ամսաթիվը՝ 18.09.2024)
14. <https://ameriabank.am/reports> (Մուտքի ամսաթիվը՝ 18.09.2024)
15. <https://www.acba.am/hy/reports> (Մուտքի ամսաթիվը՝ 18.09.2024)
16. **Mobile Business Banking 2023: лучшие мобильные банки для бизнеса в странах Восточной Европы, Кавказа и Центральной Азии.** Հասանելիությունը: <https://smebanking.agency/best-business-online-banking-2023/>, (Մուտքի ամսաթիվը՝ 18.09.2024)
17. **Business Online Banking 2023: лучшие интернет-банки для бизнеса в странах Восточной Европы, Кавказа и Центральной Азии.** Հասանելիությունը: <https://smebanking.agency/best-business-online-banking-2023/>, (Մուտքի ամսաթիվը՝ 18.09.2024)
18. **Ամերիաբանկի հաճախորդները կարող են հետևել SWIFT միջազգային փոխանցումների ընթացքին Օնլայն/Մոբայլ բանկինգի միջոցով.** Հասանելիությունը: <https://ameriabank.am/media-room/articleid/208/swift-track-international-transfers> (Մուտքի ամսաթիվը՝ 18.09.2024)

Տճանաչանք/Հանձնվել է՝ 24.09.2024

Րեցենզирована/Գրախոսվել է՝ 01.10.2024

Принята/Ընդունվել է՝ 08.10.2024